ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿԵԱՆ ՈՐ Ի ԲՈՒԽԱՐԵՍՏ, ՌՈՒՄԻՆԻԱ

Ձեր ծննդեան 80-րդ եւ Ռումինիայի եւ Բուլղարիայի Հայոց թեմերում որպէս առաջնորդ պաշտօնավարութեան 50-րդ տարեդարձերի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքները:

Սիրելի՛ Սրբազան,

Հոգեւոր կրթութիւն ստանալով Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանում, ապա Մայր Աթոռիս հոգեւոր ճեմարանում, Բարձրեալ Տիրոջը ծառայելու սրբազան ուխտով Դուք արժանացաք կուսակրօն քահանայութեան սուրբ օծման եւ կոչուեցիք Աստուծոյ խօսքը մեր ժողովրդի զաւակներին մատուցելու նուիրական առաքելութեան:

Հովուական եւ վարչական գործունէութիւնը սկսեցիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ մեր թեմերում ստանձնած տարբեր յանձնառութիւններով, ապա երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութեամբ առաջնորդական առաքելութեան կոչուեցիք Ռումինիայի եւ Բուլղարիայի հայոց թեմերում: Այսօր Տիրախնամ թեմերում կէս դարեայ առաջնորդական ծառայութեան վաստակն է Ձեր ուսերին՝ լեցուն եկեղեցաշէն ու ազգօգուտ գործերով ու նախաձեռնութիւններով: Նախորդող յիսուն տարիների ընթացքին քաղաքական ու տնտեսական բազում վայրիվերումների մէջ Դուք իմաստութեամբ առաջնորդեցիք Ձեզ վստահեալ հօտը եւ անխոնջ սպասաւորութեամբ մեր ժողովրդի կեանքից ներս յաւելեցիք հաւատը, յոյսն ու սէրը՝ միշտ մնալով հաւատարիմ զաւակը Մայր Աթոռ Սուրբ Էջմիած-

նի: Մենք սիրով ենք յիշում Հովուապետական Մեր այցելութիւնները Ռումինիայի եւ Բուլղարիայի հայոց թեմեր, երբ առիթ ենք ունեցել ականատես դառնալու Ձեր ծառայութեան արդիւնքներին, որ արժանացրել են Ձեզ Ձեր հոգեւոր խնամքին յանձնուած ռումինահայ եւ բուլղարահայ համայնքների սիրոյն ու համակրանքին:

Սիրելի՛ Սրբազան,

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ ի սրտէ աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած՝ հայցելով Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնը Ձեզ: Թող Ամենակարող Տէրը քաջառողջութիւն եւ արեւշատութիւն շնորհի Ձեզ եւ միշտ օգնական ու աջակից լինի նուիրեալ եկեղեցականիդ՝ շարունակելու Ձեր արդիւնաւոր ծառայութիւնը ի շինութիւն եւ ի պայծառութիւն Ռումինիայի եւ Բուլղարիայի հայոց թեմերի, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 22-ն Փետրուարի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ·
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1007